ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ
ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF FOREIGN AFFAIRS
OF THE REPUBLIC OF ARMENIA

1111/ 04903

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունն իր խորին հարգանքն է հավաստում Հայաստանի Հանրապետությունում Արգենտինայի Հանրապետության դեսպանությանը և պատիվ ունի հայտնել, որ «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Արգենտինայի Հանրապետության Կառավարության միջև հարկային հարցերում տեղեկատվության փոխանակման մասին» համաձայնագրի տեքստում առկա են տեխնիկական սխալներ: Հայկական կողմն առաջարկում է կատարել հետևյալ ուղղումները.

- Հոդված 5- ի 1-ին և 4-րդ կետերում և հոդված 11-ի 2-րդ կետի «բ» ենթակետում «1-ին հոդվածում» բառերը հայերեն, անգլերեն և իսպաներեն լեզուներով տեքստերում փոխարինել «2-րդ հոդվածում» բառերով:
- 5-րդ հոդվածի 4-րդ կետի «բ» ենթակետում 1-ին և 2-րդ նախադասություններում հայերեն լեզվով տեքստում «տրեստեր» բառերը փոխարինել «տրեստներ» բառերով
- 12-րդ հոդվածի 1-ին մասի հայերեն լեզվով տեքստի վերջին նախադասությունում «հաձորդ» բառը փոխարինել «հաջորդ» բառով:

Հայաստանի Հանրապետությունում
Արգենտինայի Հանրապետության
դեսպանություն
ք.Երևան

Արգենտինյան կողմից վերոհիշյալ ուղղումները կատարելու համաձայնության դեպքում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունն առաջարկում է սույն հայտագիրը և արգենտինյան կողմի պատասխան հայտագիրը համարել Համաձայնագրի անբաժանելի մաս, համաձայն 1969թ. մայիսի 23-ին ստորագրված՝ «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի կոնվենցիայի 79-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի:

Օգտվելով առիթից՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը վերստին իր խորին հարգանքն է հավաստում Հայաստանի Հանրապետությունում Արգենտինայի Հանրապետության դեսպանությանը:

Երևան, 18 մայիսի 2015թ.

Embajada
de la
República Argentina
Ereván

"2016 - Año del Bicentenario de la Declaración de la Independencia Nacional"

Nota N° MAE 6/2016
Letra: EARME
Objeto: Modificación al acuerdo

La Embajada de la República Argentina en la República de Armenia presenta sus atentos saludos al Ministerio de Asuntos Exteriores de la República de Armenia y tiene el agrado de referirse a su Nota 1111/04903 del 18 de mayo de 2015 relativa al "Acuerdo sobre el Intercambio de Información en Cuestiones Tributarias entre el Gobierno de la República Argentina y el Gobierno de la República de Armenia", suscrito el 07 de julio de 2014, la que textualmente dice:

"El Ministerio de Asuntos Exteriores de la República de Armenia presenta sus atentos saludos a la Embajada de la República Argentina en la República de Armenia y tiene el agrado de informar que en el texto del Acuerdo "sobre el intercambio de información en Cuestiones Tributarias entre el Gobierno de la República Argentina y el Gobierno de la República de Armenia" hay errores técnicos. La parte armenia ofrece hacer siguientes cambios:

- *En los puntos 1 y 4 del artículo 5 y en el subpunto "b" del punto 2 del artículo 11 cambiar expresión "en artículo 1" por "en artículo 2" en los textos de armenio, inglés y español.*
- *En las primeras dos oraciones del subpunto "b" del punto 4 del artículo 5 del texto armenio cambiar la palabra "տրեստերի" (trester) por la palabra "տրեստներ" (trestner).*
- *En la primera parte del artículo 12 del texto armenio cambiar la palabra "հաձորդ" por la palabra "հաջորդ" (siguiente).*

Si la parte argentina está de acuerdo en hacer dichos cambios, el Ministeiro de la República de Armenia ofrece considerar esta nota y la respuesta de la parte argentina como parte invariable del Acuerdo, conforme al subpunto "b" del punto 1 del artículo 79 de la Convención de Viena "Sobre el derecho de los Tratados Internacionales" firmado el 23 de mayo de 1969.

El Ministerio de Asuntos Exteriores de la República de Armenia hace propicia esta oportunidad para reiterar a la Embajada de la República Argentina las seguridades de su más alta y distinguida consideración.

Ereván, 18 de mayo de 2015."

Sobre este particular, La Embajada Argentina tiene el agrado de comunicar la conformidad del Gobierno argentino con los cambios transcriptos.

La Embajada de la República Argentina en la República de Armenia hace propicia esta oportunidad para reiterar al Ministerio de Asuntos Exteriores de la República de Armenia las seguridades de su más alta y distinguida consideración.

EMBAJADA DE LA REPUBLICA ARGENTINA · ARMENIA

Ereván, 21 de enero de 2016

00494

21 01 16

MINISTERIO DE ASUNTOS EXTERIORES
DE LA REPUBLICA DE ARMENIA
Ereván

Embajada
de la
República Argentina
Ereván

Ոչ պաշտոնական թարգմանություն
Հայտագիր N MAE 6/2016
EARME
Համաձայնագրի փոփոխություն

Հայաստանի Հանրապետությունում Արգենտինայի Հանրապետության դեսպանությունն իր հարգանքն է հավաստում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը և պատիվ ունի անդրադառնալու 2014թ. հուլիսի 7-ին ստորագրված «Արգենտինայի Կառավարության և Հայաստանի Կառավարության միջև հարկային հարցերում տեղեկատվության փոխանակման մասին» համաձայնագրի վերաբերյալ նախարարության 2015թ. մայիսի 18-ի 1111/04903 թվակիր հայտագրին, որի տեքստում ասվում է.

«Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունն իր խորին հարգանքն է հավաստում Հայաստանի Հանրապետությունում Արգենտինայի հանրապետության դեսպանությանը և պատիվ ունի հայտնել, որ «Հայաստանի Կառավարության և Արգենտինայի Կառավառության միջև հարկային հարցերում տեղեկատվության փոխանակման մասին» համաձայնագրի տեքստում առկա են տեխնիկական սխալներ: Հայկական կողմն առաջարկում է կատարել հետևյալ ուղղումները.

- Հոդված 5-ի 1-ին և 4-րդ կետերում և հոդված 11-ի 2-րդ կետի «բ» ենթակետում «1-ին հոդվածում» բառերը հայերեն, անգլերեն և իսպաներեն լեզուներով տեքստերում փոխարինել «2-րդ» հոդվածում բառերով:
- 5-րդ հոդվածի 4-րդ կետի «բ» ենթակետում 1-ին և 2-րդ նախադասություններում հայերեն լեզվով տեքստում «տրեստեր» բառերը փոխարինել «տրեստներ» բառերով:
- 12-րդ հադվածի 1-ին մասի հայերեն լեզվով տեքստի վերջին նախադասությունում «հաձորդ» բառը փոխարինել «հաջորդ» բառով:

Արգենտինյան կողմից վերոհիշյալ ուղղումները կատարելու համաձայնության դեպքում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունն առաջարկում է սույն հայտագիրը և արգենտինյան կողմի պատասխան հայտագիրը համարել Համաձայնագրի անբաժանելի մաս, համաձայն 1969թ. մայիսի 23-ին ստորագրված՝ «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի կոնվենցիայի 79-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի:

Օգտվելով առիթից՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը վերստին իր խորին հարգանքն է հավաստում Հայաստանի Հանրապետությունում Արգենտինայի Հանրապետության դեսպանությանը:

Երևան, 18 մայիսի 2015թ.»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Երևան

Այդ առումով, Արգենտինայի դեսպանությունը պատիվ ունի հայտնել վերոնշյալ փոփոխությունների վերաբերյալ Արգենտինայի Կառավարության համաձայնության մասին:

Օգտվելով առիթից՝ Հայաստանի Հանրապետությունում Արգենտինայի Հանրապետության դեսպանությունը կրկին իր հարգանքի հավաստիքն է հայտնում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը:

Երևան, 21 հունվարի, 2016թ.